ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

10 հունիս 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Ռոբերտ Ալիխանյանը, Վարդան Ավագյանը, Արտակ Բոջիկյանը, Թաթուլ Գուլինյանը, Արմինե Հովհաննիսյանը, Զարինե Ղամբարյանը, Արմենուհի Մաիլյանը, Սուրեն Մելիքյանը, Քրիստինե Սարգսյանը, Հասմիկ Վարդանյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Ադամ Սարգսյան, Աշխեն Ամիրխանյան, Ալեքսանդր Հարությունյան, Հովհաննես Նաղդալյան, Վախթանգ Թամրազյան, Գեվորգ Ամիրխանյան, Գագիկ Շահնազարյան, Մարինե Սահակյան, Գարունիկ Վարդանյան, Վարդան Գրիգորյան, Լիպարիտ Սանթրոսյան

<u>Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ.Դավիթ Սարգսյան
2. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/7 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 2/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/9 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 20 հասցեի առևտրի սրահը և վերջինիս զբաղեցրած 42.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 1651.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի պայմանները և տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «բնակավայրերի հողերից» 5370.9քմ ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց թիվ 3/2 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննությանը համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9.Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 24.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10.Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 22.6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 181 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 43.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. Նվիրաբերված գույքը Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընգրկելու մասին:

Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ղեկավարն առաջարկեց օրակարգում ընդգրկել ևս 4 հարց՝

1. *Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 24. 8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:*
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. *Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 22. 6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:*
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. *Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 181 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 43. 8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:*
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. *Նվիրաբերված գույքը Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընգրկելու մասին:*
Զեկ. Դավիթ Սարգսյան

Համայնքի ավագանին (կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0) ընդունեց առաջարկությունը և հաստատեց օրակարգը նոր խմբագրությամբ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 713-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0363-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 319.2քմ հողամասը, 11-003-0017-0014 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 537.8քմ հողամասը, 11-003-0056-0006 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 226.7քմ հողամասը, 11-003-0110-0047 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 396.8քմ հողամասը, 11-003-0259-0015 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 190.66քմ հողամասը, 11-003-0117-0009 կադաստրային ծածկագրով 86.5քմ հողամասը, 11-003-0257-0028 և 11-003-0257-0021 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝

200.5քմ հողամասը, 11-003-0209-0005 և 11-003-0209-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 823.4քմ հողամասը, 11-003-0273-0003 և 11-003-0273-0045 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 320.0քմ հողամասը, 11-029-0008-0003 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 2034.4քմ հողամասը, 11-003-0310-0021 կադաստրային ծածկագրով 1062.99քմ հողամասը կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձանց սեփականություն:

Ելնելով վերոգրյալից և և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0363-0004 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 319.2քմ հողամասը, 11-003-0017-0014 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 537.8քմ հողամասը, 11-003-0056-0006 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 226.7քմ հողամասը, 11-003-0110-0047 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 396.8քմ հողամասը, 11-003-0259-0015 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 190.66քմ հողամասը, 11-003-0117-0009 կադաստրային ծածկագրով 86.5քմ հողամասը, 11-003-0257-0028 և 11-003-0257-0021 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 200.5քմ հողամասը, 11-003-0209-0005 և 11-003-0209-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 823.4քմ հողամասը, 11-003-0273-0003 և 11-003-0273-0045 կադաստրային ծածկագրերով հողամասերի մի մասը՝ 320.0քմ հողամասը, 11-029-0008-0003 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 2034.4քմ հողամասը, 11-003-0310-0021 կադաստրային ծածկագրով 1062.99քմ հողամասը, որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 714-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 179/7 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20. 7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. փետրվարի 08-ի թիվ 199-Ա և փետրվարի 29–ի թիվ 324-Ա որոշումներով, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց

թիվ 179/7 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 1-ին հարկի սեփականատիրոջ՝ Սեդա Ներսեսի Ասմարյանի հետ) քաղ. Գրիգոր Նիկոլայի Խոջայանի կողմից ինքնակամ կառուցված 20.7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 16052024-11-0092/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գրիգոր Նիկոլայի Խոջայանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/7 հասցեի ավտոտնակը՝ 20.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը (հողամասի 1/2 մասը), համապատասխանաբար, 56408 դրամ և 108818 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 1-ին հարկի սեփականատիրոջ՝ Սեդա Ներսեսի Ասմարյանի հետ) քաղ. Գրիգոր Նիկոլայի Խոջայանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/7 հասցեի ավտոտնակը՝ 20.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 1-ին հարկի սեփականատիրոջ՝ Սեդա Ներսեսի Ասմարյանի հետ), համապատասխանաբար, 56408 դրամ և 108818 դրամ արժեքներով քաղ. Գրիգոր Նիկոլայի Խոջայանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 715-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 20.7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 14-ի թիվ 599-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 2/5 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սարիչկա Սիմոնի Բաբայանի կողմից ինքնակամ կառուցված 20.7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 30052024-11-0063/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սարիչկա Բաբայանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 2/5 հասցեի ավտոտնակը՝ 20.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը, համապատասխանաբար, 47942 դրամ և 141470 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը քաղ. Սարիչկա Սիմոնի Բաբայանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 2/5 հասցեի ավտոտնակը՝ 20.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 20.7քմ հողամասը, համապատասխանաբար, 47942 դրամ և 141470 դրամ արժեքներով քաղ. Սարիչկա Սիմոնի Բաբայանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 716-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 73/9 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 25.4ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 08-ի թիվ 572-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/9 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արթուր Մալիկոյի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված 25.4քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 21052024-11-0049/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արթուր Սարգսյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/9 հասցեի ավտոտնակը՝ 25.4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 25.4քմ հողամասը, համապատասխանաբար, 58827 դրամ և 173592 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 25.4քմ հողամասը քաղ. Արթուր Մալիկոյի Սարգսյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 73/9 հասցեի ավտոտնակը՝ 25. 4քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 25. 4քմ հողամասը, համապատասխանաբար, 58827 դրամ և 173592 դրամ արժեքներով քաղ. Արթուր Մալիկոյի Սարգսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 717-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 42. 0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 08-ի թիվ 578-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 20 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Քրիստինե Ռուբիկի Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված 42. 0քմ արտաքին մակերեսով առևտրի սրահի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 20052024-11-0076/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Քրիստինե Ռուբիկի Խաչատրյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 20 հասցեի առևտրի սրահը՝ 42. 0քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 42. 0քմ հողամասը, համապատասխանաբար, 875448 դրամ և 287041 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված առևտրի սրահը և վերջինիս զբաղեցրած 42. 0քմ հողամասը քաղ. Քրիստինե Ռուբիկի Խաչատրյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 20 հասցեի առևտրի սրահը՝ 42. 0քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 42. 0քմ հողամասը, համապատասխանաբար, 875448 դրամ և 287041 դրամ արժեքներով քաղ. Քրիստինե Ռուբիկի Խաչատրյանին օտարելու մասին

համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 718-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 1651.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1651.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1651.0քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 719-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 5370.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 11 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 5370.9քմ ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 5370.9քմ ընդհանուր մակերեսով թվով 11 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 720-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից 07.09.2023թ. «Շամախյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց թիվ 3/2 հասցեում բնակելի շենքի կառուցման թիվ Ա1-127 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի վերոնշյալ նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի» 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց թիվ 3/2 հասցեում բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 721-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 24. 8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 16-ի թիվ 615-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գուրգեն Էդիկի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված 24. 8քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 03062024-11-0017/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գուրգեն Դավթյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/4 հասցեի ավտոտնակը՝ 24. 8քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 24. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 57437 դրամ և 169491 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 24. 8քմ հողամասը քաղ. Գուրգեն Էդիկի Դավթյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/4 հասցեի ավտոտնակը՝ 24. 8քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 24. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 57437 դրամ և 169491 դրամ արժեքներով քաղ. Գուրգեն Էդիկի Դավթյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 722-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 22. 6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 16-ի թիվ 616-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/5 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Արուսյակ Հրանտի Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 22. 6քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 03062024-11-0032/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Արուսյակ Հարությունյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/5 հասցեի ավտոտնակը՝ 22. 6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 22. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 52342 դրամ և 154456 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 22. 6քմ հողամասը քաղ. Արուսյակ Հրանտի Հարությունյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 10/5 հասցեի ավտոտնակը՝ 22. 6քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 22. 6քմ հողամասը, համապատասխանաբար, 52342 դրամ և 154456 դրամ արժեքներով քաղ. Արուսյակ Հրանտի Հարությունյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 723-Ա/

Լսեցին
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 181 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 43. 8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. մայիսի 16-ի թիվ 618-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 181 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանի կողմից ինքնակամ կառուցված 64. 7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 03062024-11-0062/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սասուն Ալավերդյանին՝ Դիլիջան

համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 181 հասցեի ավտոտնակը՝ 64.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 43.8քմ հողամասը, համապատասխանաբար, 149846 դրամ և 299343 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 43.8քմ հողամասը քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 181 հասցեի ավտոտնակը՝ 64.7քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 43.8քմ հողամասը, համապատասխանաբար, 149846 դրամ և 299343 դրամ արժեքներով քաղ. Սասուն Գերասիմի Ալավերդյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 724-Ա/

Լսեցին
ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի և Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի միջև 29.05.2024թ. կնքված թիվ 2 նվիրաբերության պայմանագրի, Դիլիջան համայնքին է հատկացվել 1 հատ աղբատար մեքենա, 1 հատ ունիվերսալ վակուումային կոմունալ մեքենա և 110 հատ աղբամաններ: Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել վերը նշված գույքը ընդունել որպես նվեր և ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42–րդ կետով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ըստ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի և Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի միջև 29.05.2024թ. կնքված թիվ 2 նվիրաբերության պայմանագրի հավելված 1-ում նշված գույքը Դիլիջանի համայնքապետարանին նվիրելու առաջարկությանը՝ (հավելվածը կցվում է):

2. Սահմանված կարգով հավելված 1-ում նշված գույքը 148 007 600 /մեկ հարյուր քառասունութ միլիոն յոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում:

3. Համայնքի ղեկավարին՝ սահմանված ժամկետներում թվով 1 հատ KAMAZCM18/KAMAZ65115/ մակնիշի աղբատար մեքենան VIN-XKK504634P0000040 և 1 հատ UKM 1500-0006 ունիվերսալ վակուումային կոմունալ մեքենան /УКМ-1500/ ներկայացնել ՀՀ ՃՈ ՀՔԲ հաշվառման համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 725-Ա/

Լսեցին

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հունիսի 26 -ին, ժամը 17-ին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 726-Ա/

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱՋԻՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____